

(Գիտուրյան վաստակավոր գործիչ)

## ՄԽԻԹԱՐ ԳՈԶԻ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԻՑ

(ՓԻԼՈՒԻ ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԽԱՆԱՄՈՒԹԵԱՆ ԲԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՌ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ  
ԳՈԶԻՆ ԱԽՍՅԵԱԼ ՊԱՏՃԱՌ)

 Վագ Հովհաննես վարդապետ Տավուշեցու աշակերտ և կրտսեր Հովհաննես Վանական վարդապետ Տավուշեցու ուսուցիչ Մխիթար Գոշը միջնադարյան հայ գրականության անդաստանում Հովհաննես Սարկավագ Սոփիստոս վարդապետ Հաղբատացուց հետո ամենաշողջողուն աստղերից մեկն է:

Հայ մշակութիւն պատմության մեջ Մխիթար Գոշը սովորաբար համարվում է առաջինը, որ գրադվել է հայ եկեղեցական և պետական իրավունքի ուսումնասիրությամբ, կանխելով Սմբատ սպարապետ Գունդստարյին, ինչպես առակագրությամբ, կանխելով Վարդան Այգեկցուն:

Վենետիկի Մխիթարյան հայր Գարեգին վարդապետ Զարբհանալյանը դեռևս նախորդ դարի վերջում, հանրագումարի ենթարկելով Մխիթար Գոշի գրական ժառանգությունը, Դատաստանագործի և Առակների տեսությանը կցել էր նաև «Մեկնութիւն Երեմիայի», Աղոթքներ, «Յայտարարութիւն ուղղափառ հաւատոյ» և ուրիշ յարութիւն Ղազարուա ճառի հիշատակությունը<sup>1</sup>:

Իսկ 1925—1926 թվականներին Վիեննայի Մխիթարյան հայր՝ դոկտոր Համազասպ վարդապետ Ուկյանը Մխիթար Գոշի գործերի ցանկը այսպես.

<sup>1</sup> Գարեգին վարդապետ Զարբհանալյան, «Հայկական հին գրության պատմություն» (Դժողով գար), Գալաքար, 1897, էջ 686—693, մանավանդ 897—898,

տանագիրք», 2. «Պատմութիւն», 3. «Մեկնութիւն մարգարէութեանցն Երեմիայի մարգարէի», 4. «Առակը», 5. Մանր երկեր, թվով յոթն, որոնք են՝ ա. Աղոթքներ, բ. «Փիլոնի Ցաղացս նախախնամութեան բան առաջին առ Աղեքսանդրոս Գօշին ասացեալ պատճու», գ. «Ճառ ի յարութիւն Ղազարուա», դ. «Յայտարարութիւն ուղղափառ հաւատոյ ընդրէմ ամենայն հերձուածոց» և «Քուղի խարտական», ե. «Ներբողնեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալ հոստրով», զ. «Տաղ» և է. Կտակ մը<sup>2</sup>:

1928 թվականին հրատարակած մեր դոկտորական շարագրության մեջ «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց և այլն» (Վրացերեն) մենք դիտել էինք Մխիթար Գոշի գրական ժառանգությունը ինը կետի ներքո, մասնավորապես հիշատակելով «Փիլոնի Ցաղացս նախախնամութեան բան առաջին առ Աղեքսանդրոս Գօշին ասացեալ պատճու» (?) և «Գծագրութիւն... յաղագովացցու» (9)<sup>3</sup>:

Մխիթար Գոշի գրական ժառանգությունը ճշտորեն պատկերելու համար կարևոր նշան:

<sup>2</sup> Համազասպ վարդապետ Ուկյան, «Մխիթար Գոշ», «Հանգես ամսօրյա», 1925 թ., էջ 548—561, 1926 թ., էջ 25—35, 129—137; — Նույնի «Մատենագրական քըննություններ» («Աղդային մատենագրան», մժթ), Վիեննա, 1926, էջ 121 (123)—192, հատկապես 145—192;

<sup>3</sup> Լ. Մելիքսեր-Բեկ, «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց և այլն», Թրիլիս, 1928, էջ 214—249, հատկապես 223—228 (Վրացերեն):

նակություն ունի նրա անմիջական աշակերտ Կիրակոս վարդապետ Գանձակեցու վկայությունը, որ պահպանված է վերջինիս «Հայոց պատմության» մեջ, ալսինքն՝

«Եւ եթող նա յիշատակ և արձան գերեզմանի գիրս մտախոն յօդուտ ուսումնասիրաց համառօտ մարգարէութեանն երեմիայի գեղեցկագիր կարգք, և սուու ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեանն, թէ որպէս պատշաճ իցէ, կամ ո՞րպիսի կարգք, և գիրը մի ողբք ի վերայ բնութեանս ի դիմաց Աղամայ, առ որդիս նորա և ի դիմաց ծւայի առ դստերս նորա. և գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդէմ ամենայն հերձուածողաց ի ինդոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղոր իրոյ, և այլ թուղթս խրատականս. և եղկ վախճան նորա ի ՈԿԲ (=1213) թուականին»<sup>4</sup>.

Դժվար չէ կուահել, որ այս ցանկի մեջ առաջին տեղը հիշված է [«Մեկնութիւն»] մարգարէութեան երեմիայի», երկրորդ տեղը՝ կանոններ, այսինքն «Դաստաստանագիրք հայոց»-ը, երրորդն է «Ողբասածութիւն», չորրորդը՝ «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ», որը հավանական է նույն «Գծագրութիւն յաղագս Վրաց»-ը լինի, հինգերորդը՝ խրատական թղթերը, որ հավանական է նույն մանր երկերը և ճառերը լինեն:

Միսիթար Գոշի գրական գործունեությունն այսուհետեւ պիտի որակավորվի ոչ միայն իրեն ականավոր իրավաբանի և ոչ պակաս ականավոր առակախոսի, այլև իրեն նշանավոր մատենագիր-մեկնիչի և դավանաբանի, որի կյանքը ընթացել է «Աւկարնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն», ապա «յանապատս և յեղայրանոցս անուանեալ Դասնոյ», հետո Գետկա վանքում և, վերջապես, նոր Գետիկ կոչված վանքում, որ նույն Դոշավանքն է<sup>5</sup>:

<sup>4</sup> «Պատմութիւն հայոց արարեալ կիրակոսի վարդապետի Գանձակեցույց», Թիֆլիս, 1909, էջ 208—209.

<sup>5</sup> «Միսիթար Գոշի Դաստանակագիրք հայոց», Վանա ծայրագույն վարդապետ Թաստամյան, Վաղարշապատ, 1880, էջ 69—74:

6 «Մ. Գոշի վանքը», «Արարաս», 1892 թ., էջ 40. — 1. Հարուրյունյան, «Գոշի վանք կամ նոր Գետիկ», «Աղքագրական հանդես», Ժ. 1903 թ., էջ 37—38. — 2. Սպենդիարյան, «Միսիթար Գոշի վանքը», 1911 թ., № 16—18. — «Խորհրդական Հայաստանի պատմական հուշարձաններ», 1. Դիլիջանի շրջան», Երևան, 1937, էջ 14—18. — 2. Եղիազարյան, «Նոր Գետիկ վանք կամ Գոշավանք», «Էջմիածնին», 1959 թ., № 6, էջ 46—53, № 9, էջ 51—58, № է, էջ 50—55 (հատկապես 53—54):



Միսիթար Գոշի դերը հայ մշակութիւն պատմության մեջ ոչ պակաս շափով նշանակալից է մեկնուղական և զավանարանական-հակածառական բնույթի երկերով, քանի որ նրա ուսերի վրա էր «հայոց հյուսիսային կողմանց վարդապետներ»-ի ղեկավարի կամ պարագլիի դերը ժիր դարի վերջում և ժողովրդի սկզբաներին՝ մինչև նրա մահը (1213 թ.), ինչպես, նրանից առաջ՝ Գրիգոր Տուառորդին, Գրիգոր Սեբաստոսին, Գրիգոր Սեբաստոսին և Դավիթ Քորայրցին բնույթի թորայրեցին ժիր դարի առաջին կեսին այսպիսի պարագլուխներ էին, «հյուսիսային» հատվածում՝ Հովհաննես սարկավագ Սոփեսուը, իսկ հարավ-արևմտյան հատվածում՝ Պողոս Տարոնացին<sup>6</sup>:

«Հայոց հյուսիսային կողմանց վարդապետներ»-ի ցանկերը, բարերախտարար, պահպանված են հայ մատենագրության հուշարձաններում՝ մեկը 1184—1185 թվականների շուրջ, մյոււլ 1204—1205 թվականների շուրջ, ուր հիշատակված է նաև Միսիթար Գոշը: Այս հիշատակությունը հետաքրքիր է նրանով, որ մի դեպքում Միսիթարը տեղավորված է ցանկի վերևում, այսինքն՝ երիտասարդների շարքում, իսկ մյուսում նրան հատկացված է առաջին տեղը, հավանական է՝ իրու պարագլիի:

Ահա այդ ցանկերը.

Առաջինը (ըստ ներսես Շնորհալու «Ընդհանրական»-ի).

«Բասիլ եպիսկոպոս, որ յարևելոյ հիւսիսոյ, վարդապետ Գրիգոր (Տուառորդին— և. Մ.-Բ.) Սանահին և հայոց Յօհաննէս, վարդապետք մայրաքաղաքիս (մայրաքանիցն— և. Մ.-Բ.) Հաղբատայ՝ իգնատիոս, Պետրոս, Վարդան և Դաւիթ (Քորայրեցի— և. Մ.-Բ.), Խաչատրուր վարդապետ Հաղպատանին (Տարոնացին— և. Մ.-Բ.), Միսիթար վարդապետ Խոսկերտիս (Խոսկերտիսին— և. Մ.-Բ.) և այլք աշակերտեալք ամենեքեան. Սրբոց Կոտակարանաց Աստուծոյց<sup>8</sup>:

<sup>7</sup> 1. Միլիկսեր-Թեկ, հիշալ գիրքը, էջ 121—162, 238—249.— Մեր գրախոսականը՝ «Հայկական ՍՍՈ Գիտությունների ակադեմիայի տեղեկագրում», 1957 թ., № 4, էջ 130—131:

<sup>8</sup> «Թուությ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ հայրապետին մերոյ Տեան ներսիսի Շնորհալուց», էջմիածնին, 1865, էջ 426—427.— Նույնը՝ Երևանին, 1871, էջ 308:

Երկրագրղը (ըստ Կիրակոս Գանձակեցու «Հայոց Պատմութեան»)։

«Եւ էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք, որ Գօշն կոչիր, շինող վանացն Գետկայ, այր իմաստուն և նեզ (ընդգծումը մերն է — Լ. Մ.-Բ.). և վարդապետն ուսմամբ հողակեալ հզնատիփոսն և Վարդան և Դաւիթ Թրիպարեցին ի Հաղպատայ, Ցովհաննէս հայր Սանահնին, որ զկնի մահուան Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին,... և Գրիգորէս եպիսկոպոս Հաղպատայ»<sup>9</sup>։

Իրեւ պարագլուխ «Հայոց հյուսիսային կողմանց վարդապետներ»-ի կամ որ նույնն է, «Հյուսիսային կողմանց հայոց վարդապետներ»-ի», Միսիթար Գոշը 1197—1204 թվականների միջոցին ելույթ է ունենում «Ծովագատկի» առթիվ Թրիլիսիում ծագած երկպառակության շուրջը, հորինելով իր «Գծագրութիւն... յաղագս Վրաց» երկասիրությունը<sup>10</sup>։

Իսկ այս երկասիրությունն անմիջական պատասխանն էր գեռևս 1123—1125 թվականներին Թրիլիսիում գումարված վրաց-Հայկական համատեղ եկեղեցական ժողովում վրաց մեծ գիտնական, աստվածաբան և փիլիսոփա Արսեն Իղալթուեցու կողմից ներկայացրած մեղադրանքին, որը բաղկացած լինելով 30 կետից, ամփոփված է վերջինիս այսպես կոչված «Շոկմատիկոն»-ում<sup>11</sup>: Գոշի ելույթը Ծովագատկի կապակցությամբ ձայնակցում է, մի կողմից, վրացական անանուն հեղինակի «Թագակիրների պատմականն ու գովասանքը» երկին<sup>12</sup> և, մյուս կողմից, ասորի պատմիչ Գրիգոր Բարհեր-

9 «Պատմութիւն հայոց Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ», էջ 208—209; — Լ. Մելիքսեբ-Թեկ, «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», էջ 175—176:

10 «Թուղթ Միսիթար վարդապետին որ Գօշն կոչիր», «Արարատ», 1900 թ., էջ 497—504, 562—568, 1901 թ., էջ 55—61, 121—127:

11 Խյալ Արաւած. «Միսիթար Գոշի «Յաղագս Վրաց» երկը և նրա գրական աղբյուրները», Թրիլիսիի Պետական համալսարանի Աշխատություններ», VII, 1938, էջ 97—108 (Վրացերեն):

12 Լ. Մելիքսեբ-Թեկ, «Վարդապետ Հայոց հյուսիսային կողմանց», էջ 238—249:

րեռա Արուլ-Ֆարաշի ժամանակադրության<sup>13</sup>:

Միսիթար Գոշի դավանաբանական-հականառական ընույթի այս գրվածքը, ի՞նչարկե, չի կարելի դիտել այլ կերպ, բայց եթե իբրև մի նոր փորձ, հաշվով երրորդ, Անանիա վարդապետ Սանահնեցու «Բան Հակաճառութեան ընդէմ երկարնակաց» և Հովհաննես Սարկավագ վարդապետ Հաղպատացու «Յաղագս քաղկեդոնականացն» երկերից հետո, որոնցից առաջինը գրված է 1054—1060 թվականների շուրջ, իսկ երկրորդը՝ 1123—1125 թվականների շուրջ: Միսիթար Գոշի «Գծագրութիւն... յաղագս Վրաց»-ը, հետևելով նրանց, գրված պիտի լինի 1197—1204 թվականներին<sup>14</sup>:



Առանձնապես պիտի շեշտել Գոշի մեկնարանական (էգղեգետիկ) գործերը, որոնցից մեկը, որ մենք ստորև հրատարակում ենք, առնչվում է փիլիսոփայական մտքի զարգացման փուլերից մեկի հետ:

Դա «Փիլոնի Յաղագս նախախնամութեան թան առաջին առ Աղեքսադրոս Գօշին ասացեալ պատճառով ընդարձակ վերնագիրը կրող երկն է, որը մտած է Գրիգոր Արասուրուու «Պատճառաց գրքի» մեջ ԺԴ դդ զարի սկզբներին և, համենայն դեպս, ոչ ուշ քառ 1213 թվականը, ասել է՝ զեռևս Գոշի կենդանության օրոք:

Այս երկը, իրեւ Գրիգոր Արասուրուու «Պատճառաց գրքի» գլուխներից մեկը, մեղ հասել է մի քանի գրշագիր օրինակով, որոնցից մեկն է Հայաստանի Մատենադարանի ԺԴ դդ դարի ձեռագիրը № 1650/1879, մյուսը Վիեննայի Միսիթարյան միաբանության մատենադարանի 1725 թվականի ձեռագիրը № 47<sup>15</sup>:

13 Նույն տեղում, էջ 29; — Նաև Լ. Մելիքսեբ-Թեկ, «Ծովագատկի առթիվ 1197 թվականին Թրիլիսիում անդի ունեցած երկպառակության մասին», «Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի Տեղեկագիր», III, 1925, էջ 49—60; — Նույնի «Հին Թրիլիսիի և Հայվրացական կուտուրական կապերի պատմությունից», «Պատմա-բանասիրական հանդես», 1958 թ., № 3, էջ 154:

14 Լ. Մելիքսեբ-Թեկ, «Վարդապետ Հայոց հյուսիսային կողմանց», էջ 238—249:

15 Հակովրա վարդապետ Տաշլան, «Յուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միսիթարյանց ի Վիեննա», 1895, էջ 224; — Լ. Մելիքսեբ-Թեկ, «Վարդապետք Հայոց հյուսիսային կողմանց», էջ 227:

Գրիգոր Աբասառդու «Գիրք պատճառացածը», ինչպես հայտնի է, պարունակում է մի շարք ճառեր<sup>16</sup>, թարգմանված, ինչպես Գարեգին վարդապետ Զարբհանալզանն է նշել, Փիլոնից «ի նախնեաց» մերոց, «յորոց ոմանց յունական բնագիրք կորսուած են»<sup>17</sup>. Այս ճառերը թվով տասն են, որոնցից միմիայն մեկն է Դավիթ Քորայրեցու մեկնարանած, այն է՝ «Փիլոնի ախողիկ որ ի լինելութեան խնդրոյ և լուծմանց ասացեալ սկիզբն միահամուու եւթանց գրոցն Դաւիթի վարդապետի Քորայրեցոյ»<sup>18</sup> և մեկն էլ Միհիթար Գոշի մեկնարանած՝ վերև նշած վերնագիր ներքու; Վերջինս հոմարեն «Պերի տու պրոնոիհաւ-ի մեկնարանությունն է:

Փիլոնը, ինչպես հայտնի է, Ա դարի փիլիսոփա էր, ծնված նախքան Քրիստոս մոտ 25 թվականին և վախճանված Քրիստոսից հետո մոտ 40 թվականին: Մագումով նա երայեցի էր, իսկ գործունելությամբ աղեքսանդրացի, ուստի և կոչվում է երբեմն Երրայեցի, երբեմն Աղեքսանդրացի: Իր փիլիսոփայական ուսմունքով համարվում է իղեալիստական իմաստասիրության հետևող, որը ձգուու էր ի մի ձուել և հաշտեցնել աստվածաբանությունը Պղատոնական և Ստոյիկյան իդեալիստական ուսմունքների հետ<sup>19</sup>:

Այժմ Փիլոնի մասին տանք խոսք Գարեգին վարդապետ Զարբհանալզանին.

«Փիլոն, զոր Սովորն Հերոնիմոս կը դասէ ընդ մատենագիրս Եկեղեցւոյ, հրեայ էր աղոգաւ ի քահանայական ցեղէ և յընտրելագոյն տոհմից Աղեքսանդրիոյ: Երիտասարդ հասակէն ետեւ եղաւ գեղեցիկ դպրութիւնց և իմաստասիրական ուսմանց, յորս և հոչակա-

<sup>16</sup> Զեռագիր № 1650/1879, էջ 143 ա—153 բ: — Հ. Տաշյան, Հիշյալ աշխատությունը, էջ 223—225:

<sup>17</sup> Հ. Գ. Զարեհանալզան, Հիշյալ աշխատությունը, էջ 737:

<sup>18</sup> Դավիթ Քորայրեցու մասին տե՛ս Ներսս Վարդապետ Ակինյան, «Դավիթ վարդապետ Քորայրեցի», «Հանգն ամսորյա», 1908 թ., էջ 139—147: — Նույնի «Մատենագրական հետազոտություններ, քննություն և բնագիր», 1, (Աղջային մատենագրան, ՂԴ), Վիեննա, 1922, էջ 44—68: — Լ. Մելիքսեր-Բեկ, «Վարդապետք Հայոց հյուսիսային կողմանց», էջ 191—196: — Վ. Հակոբյան, «Դավիթ Քորայրեցու հիշատակարանը», Հայկական ՍՍԾ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1952 թ., № 8, էջ 113—120:

<sup>19</sup> «Փիլիսոփայության պատմություն» յորս հատուրով, հատ. I, Մոսկվա, 1957, էջ 157 (ուսւերեն):

նուն հանդիսացաւ, և կ'աւանդեն. թէ պուաէի քան զամենայն իմաստունս իր դարուն խելամուտ եղած ըլլայ ի հմտութիւն վարդապետութեանց Պղատոնի և Փիլիթագորայ, որոց հետևող էր և զարմացող: Իր ոճոյն և կարծեաց համաձայնութեանն համար ընդ պղատոնականաց միւս այլ Պղատոն կոչված է ի հնոց և կամ Պղատոն հրեայ. և յլղեքսանդրիա, ուր փայլեցաւ, սովոր էին ըսել ի գովութիւն նորա, թէ կամ Պղատոն կը նմանի Փիլոնի և կամ Փիլոն Պղատոնի: Սոզոմէն՝ Պիլիթագորեան կը կոչէ զնա, շատ տեղ ի գրուածս Փիլոնի հանդիպելով, յոյն փիլիսոփային կարծեաց, վճոց և իմաստից թայց իրեն ամենէն մեծ պարծանքն է Սոզոմէնց խորին գիտութիւնն և հմտութիւնն: Մննդեան թուականն յայտնի չէ. բայց ինքն իսկ կ'ըսէ թէ արդէն հասակն առած էր, երբ յաւուրս կայսերութեանն Գայիոսի... [եղաւ] ի Հռովմ, ուր յղեցին զնա աղեքսանդրացի հրեայք ի պաշտպանութիւն իրենց իրաւաց յատենի կայսեր»<sup>20</sup>:

Փիլոն Երրայեցու կամ, որ նույնն է, Աղեքսանդրացու երկերի հին հայերեն թարգմանությունները, որոնց հունարեն բնագրերը մասամբ կորած են, հրատարակել են Վենետիկի Միհիթարյանները՝ Մկրտիչ Վարդապետ Աղեքերյանը 1822 և 1826 թվականներին<sup>21</sup> և Գարեգին վարդապետ Զարբհանալզանը 1892 թվականին<sup>22</sup>:

Միհիթար Գոշի մեկնարանությունը՝ Փիլոնի ածաղակ նախախնամութեան, Վենետիկ, 1883, էջ 689—690: — Նույնի «Մատենագրան հայկական թարգմանությանց նախնյաց (Գարեգ Դ—ՓԴ)», Վենետիկ, 1889, էջ 735—736:

<sup>20</sup> Գարեգին Վարդապետ Զարբհանալզան, «Հայկական մատենախոսություն», Վենետիկ, 1883, էջ 689—690: — Նույնի «Մատենագրան հայկական թարգմանությանց նախնյաց (Գարեգ Դ—ՓԴ)», Վենետիկ, 1889, էջ 735—736:

<sup>21</sup> «Փիլոնի Երրայեցու բանք երեք չեն ի լոյս ընծայեալք». Ա և Բ Ցաղագս նախախնամութեան,՝ Դ Ցաղագս կենդանեաց. ի հին թարգմանութենէ նղելոյ ի յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց, յեղեալ ի լատին բարբառ, աշխատասիրութեամբ 2. Մկրտիչ Վ. Աղեքերեանի, Վենետիկ, 1882: — «Փիլոնի Երրայեցու Մացուրդը ի Հայոց, աշխատասիրութեամբ Հ. Ակրտիչ Վ. Աղեքերեանի, Վենետիկ, 1826:

<sup>22</sup> «Փիլոնի Երրայեցու ճառը, որոց հելլեն բնագիրը հասին առ մեզ», աշխատասիրութեամբ Հ. Գարեգին Վ. Զարեհանալզանի, Վենետիկ, 1892:

**ՓԻԼՈՆԻ ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ԲԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՌ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ  
ԴՕՇԻՆ ՍՍՍՀԵԱԼ ՊԱՏՃԱՌ**

Անգեղճ է Աստուած ի ձիրս, և զոր պարզեց, այլ ոչ նախանձի, որպէս առ մարդու տհսանեմք, զի արար, քանզի զոր եղ ի բնութեանս, զոր ստեղծ և զամենայն, զոր հար, բարի է. զի մասն մի խոհականութիւնն է, որով միշտ ի խնդիր լինիմք բարտըն. քանզի տհսանեմք, և զառաջիկայ գիրս յայսմանէ յարմարեալ:

Եւ թէ զիա՞րդ է պատճառ, յայտնի է ամենցուն իմաստունն Փիլոն՝ ազգաւ և ուսմամբ և վարուք: Այլ և Աղեքսանդրոս եղբարորդի նորին և ուսմամբ յունականաւ վարժեալ, աշակերտ գոլով արինացն Մովսեսի, Տեսեալ սորա զրազմադիմի ասացուածն լունական առասպելին, որ է այսպէս:

Ասացին ոմանք ինքն եղ գոլ զարարածս. և այլք՝ թէ զիմուղէ գտեալ յայնմանէ գոյացոյց. և կէսք՝ թէ զերկիրս առ, և ի սմայ է երիցն տեսակ. խոնաւ, որպէս ջուր, և շոգոլի,

որպէս [ 158 ա ] աւդ: Այլք զաւդ, կէսք՝ զհուր, այլք զանազանք, և չերմ որպէս բուաոցանէ երկիր. ոմանք զջուր, զի և կէսք՝ մոլորեալք ի բանս Մովսեսի յայնս, զի ասէ. ունի խաւար ի վերայ անդնդոց, և հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (Ծննդ. Ա 2): Վկայէ, ասեն, Մովսէս, թէ յերիցս յայսցանէ գոյացոյց Աստուած. ի խաւարէ, յանդնդոց, ի ջորյ. զմիտս ասացելոցն ոչ իմացեալ, զի նախասկիզբն եղ լինելոյ երկնի և անդնդոց. և յայսմանէ զմասնաւորսն գոյացոյց: Զայս ասելով, ինքնարաւ և անվախճան, որպէս ինքն եղ. այլ և անխմամ Աստուծոյ ամենեկին:

Զայս ամէն առաջի եղեալ՝ Աղեքսանդրոս խնդրէր լուծումն ի Փիլոնէ, որպէս վայել էր նորա իմաստութեանն, ոչ թէ հակառակութեամբ, այլ ուսումնասէր հոգովն: Այս և որ սոցին նման է պատճառ առաջիկայ գրոցս, որպէս ասէ. յորժամ զնախախնամութեանն բան [ 158 բ ]:

